

Quality Management Problems of Education

Կրթության որակի կառավարման խնդիրները

Մ.Ս.Շահվերդյան

ՈԱԿ ղեկավար, հոգ. գիտ. թեկ., դոցենտ

Аннотация В статье рассматривются задачи управления качеством образования в свете изменения парадигмы профессионального образования. В результате исследований, проведенных в ВГУ были выделены задачи, решение которых непосредственно повлияет на качество профессиональной подготовки будущих специалистов.

Summary In article is considered the task of controlling the educational process in the light of the paradigm of professional learning. As a result, we have been mentioned problems at the VSU, that solution undirectly effects on the professional training of future specialists.

Ակնհայտ է, որ կրթության համակարգի զարգացումը նպաստում է պետության կայունացմանը և միջազգային ատյաններում հեղինակության բարձրացմանը: Կրթության բնագավառում ցանկացած նվաճում բերում է որակական փոփոխությունների հասարակության բոլոր ոլորտներում: Կրթության բարեփոխումները և Եվրոպական չափորոշիչների կիրառումը պահանջում է միասնական կրթական դաշտի ստեղծում, սակայն այն պետք է համապատասխանի և հակասության մեջ չմտնի ազգային ու պետական քաղաքականության մոտեցումներին, պետք է բավարարի տվյալ հասարակության պահանջներին:

Այսօր կրթության որակի ապահովումը տնտեսական, քաղաքական ինքնուրույնության, մրցակցային դաշտում գոյության երաշխիքն է: Այն մեր հարուստ ժառանգության, մշակույթի կրողն է, սակայն այսօր դա պայամանավորված է պետական և հասարակական, շուկայական հարաբերություններով: Կրթության նկատմամբ պահանջարկը և նրա վերահսկողությունը, որակի ապահովումը իրականացվում է երկու մակարդակներով՝ պետական և հասարակական: Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը կայուն, համակարգված և նպատակային է, իսկ կրթության հասարակական, շուկայական պահանջարկը պայամանավորված է համապատասխան շուկայի այսօրվա պահանջներով: Պետական վերահսկողությունը ֆորմալ է, այն ապահովում է կրթության կայունությունը և համապատասխանությունը Բոլոնյան գործընթացին, Եվրոպական չափորոշիչներին: Վերջինս ինչ որ տեղ քարացած, բայց օբյեկտիվ բնույթ է կրում և

հնարավորություն է տալիս պետական մակարդակով համակարգել և հետևողական իրականացնել պետական քաղաքականությունը կրթության բնագավառում: Հասարակական, սոցիալական վերահսկողությունը ավելի հումանիստական է, սուբյեկտիվ, ճկուն և առաջանում է հասարակական պահանջներից, նրա կողմից իրականացվող վերահսկողության արդյունքում՝ ազգային, տնտեսական, քաղաքական և այլն դաշտի հիման վրա:

Կրթության որակի ապահովման չափանիշները նույնն են եվրոպական տարածքի այն պետություններում, որոնք ընդունել են կրթության բարեփոխումների ճանապարհը և գործում են վերոնշյալ պահանջներից, սակայն նրանք յուրովին են անցնում ազգային մտածողությամբ՝ ենթարկվելով ազգային, տարածաշրջանային փոփոխության, կապված հասարակական հարաբերությունների ընկալման և դիրքորոշման հետ: Կրթությունը դարձել է հզոր գործիք, որը ուղղված է հասարակության կատարելագործմանը, ազդելով նրա անդամների մտածողության զարգացման վրա, կողմնորոշելով և ձևավորելով նրանց որպես տվյալ հասարակության լիարժեք քաղաքացի: Այն, թե ինչքանով է այս խնդիրը լուծելի, բխում է պետություն – հասարակություն հարաբերությունների առանձնահատկություններից, նախկինից ստացած ժառանգությունից, սակայն այսօր նրանք ընտրել են տարբեր ուղիներ, իրականացնելու այն պահանջները, որ իրենց առջև դրվել է շուկայական մրցակցության պայմաններում: Խորհրդային միության կրթական համակարգը ուղղված էր գիտելիքների, հմտությունների, կարողությունների յուրացմանը, այսինքն առաջադիմությանը՝ կրթության ձևական կողմին և ընթացքին, այն դեպքում, երբ կրթության բարեփոխումները այսօր շեշտը դնում են ելքային արդյունքին. բավարարում է արդյոք՞ շրջանավարտը շուկայի պահանջներին: Կրթությունը այսօր առավել հեռանկարային ուղղություն է, որը կարող է արդյունավետ զարգանալ և ազդել տնտեսության վրա այն դեպքում, երբ կրթական համակարգը ոչ միայն ընդունում է միջազգային չափանիշները, այլ նաև հաշվի է առնում ազգային առանձնահատկությունները:

Մեր պայմաններում կրթության որակի ապահովման կարևոր երաշխիքներից մեկը՝ օբյեկտիվ, սկզբունքային մոտեցումն է, որը հիմնված է բուհի ինքնավարության վրա: Ասածս ամենևին չի նշանակում, որ մեր կրթության որակը ավելի վատն է, քան այլ երկրներում՝ վերջին տարիներին նկատվում է կրթության որակի նկատելի անկում բազմաթիվ երկրներում: Մեզ մոտ պատճառներից մեկն այն է, որ կրթությունը ղեկավարվում է պետական - հասարակական մեխանիզմներով և պետական

քաղաքականության սկզբունքներով, որն օրենքով ամրագրված է: Օրենքով կարգավորված է նաև հասարակության, գործատուների մասնակցությունը կրթության որակի վերահսկման և գնահատման գործընթացում: Կրթությունը գլոբալիզացման պայմաններում ստացել է նոր երանգ և գնում է դեպի ընդհանուր կրթական դաշտի ստեղծմանը, ինչը ամրապնդվում է Բոլոնյան գործընթացով:

Այդ գործընթացի մասնակից պետությունները պարտավորվել են «մեծացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների համատեղելիությունն ու համադրելիությունը, միևնույն ժամանակ հարգելով նրանց բազմազանությունը, ընդունել այն կարևոր ազդեցությունը, որ ունեն բոլոր ուսումնական հաստատությունները մեր հասարակությունների զարգացման համար, հիմնված նրանց սովորույթների վրա, որպես ուսուցման, հետազոտական, ստեղծագործական և գիտելիքի փոխանցման կենտրոններ, ինչպես նաև արժեքների վրա, որոնց վրա կառուցված են մեր հասարակությունները» (): Գործընթացի նպատակն է երաշխավորել, որ բուհերը ունենան բոլոր անհրաժեշտ միջոցները՝ շարունակելու իրագործել իրենց նպատակների, ելնելով առաքելությունից համակարգված և ամբողջական դաշտում:

Այս նպատակները ներառում են՝

- ✓ պատրաստել ուսանողներին որպես ժողովրդական հասարակության ակտիվ քաղաքացի,
- ✓ պատրաստել ուսանողներին իրենց ապագա մասնագիտական կողմնորոշման համար,
- ✓ հնարավորություն տալու իրենց անհատական զարգացմանը, ստեղծելով և պահպանելով գիտելիքի լայն և առաջավոր հիմք և խթանելով հետազոտությունը և նորարարությունը:

Այս գեկույցում, ՎՊՄԻ-ի փորձի հիման վրա, կցանկանայի ներկայացնել կրթության որակի կառավարման մի քանի խնդիրներ, որոնք առկա են և առայժմ դեռ այս ուղղությամբ ամբողջական լուծման եղանակ չի մշակված:

Ինչպես և Բոլոնյան գործընթացի մասնակիցներից շատերը, մենք առաջնորդվեցինք կրթության որակի ապահովման տրամաբանական կառուցողական վերլուծության մոդելով, սակայն իրականացման գործընթացում հանդիպեցինք մի շարք խոչընդոտների, որոնք դժվար է միանշանակ բացատրել: Այն ենթադրում է մի քանի փուլից բաղկացած գործընթաց, որի մի մասը ուղղված է իրադրության վերլուծությանը, իսկ մյուս մասը՝ արդյունքներին հասնելու

Ճանապարհների վերլուծությանը: Որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ ԲՈՒՀ-ի պայմաններում մասնագետների պատրաստումը իր մեջ ներառում է ոչ միայն շուկայի պահանջարկի բավարարում, այլ նաև կոնկրետ անձնավորության պահանջները՝ ստանալ պահանջարկ ունեցող մասնագիտություն: ԲՈՒՀ-ի կողմից կրթության որակի կառավարման գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրականում կան բազմաթիվ հակասություններ, որոնք պայմանավորված են շուկայական պահանջարկով և նրանց բավարարման սահմանափակ հնարավորություններով, մանկավարժական կադրերի պատրաստվածության և կրթության ապահովման նոր տեխնոլոգիաների իմացությամբ, կրթության որակի ապահովման երաշխիքներով և այլն:

Կրթության որակի ապահովման խնդիրը բազմագործոնային է և մենք դեռ չունենք համապատասխան ցուցանիշներ և չափորոշիչներ, որոնց միջոցով հնարավոր է ստեղծել որակի գնահատման ամբողջական համակարգ: Կրթության որակի ցուցանիշները այսօր դժվար է համակարգել, որովհետև կրթության մեջ զուգահեռ գործում են որակական և քանակական գնահատման համակարգեր, որոնք լրացնում են միմյանց, սակայն չեն կարող ունիվերսալ համարվել, որովհետև իր մեջ ընդգրկում է մի շարք ուղղություններ՝ տեսական - մանկավարժական, վարչական-կառավարման գործունեություններ բոլոր ուղղություններով և մակարդակներով:

Կրթության որակի ապահովման խնդիրը պետք է առաջին հերթին սկսվի բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության վերլուծությունից, տարբեր օղակներում աշխատող մասնագետների մասնագիտական կարողությունների և շուկայի պահանջների համադրման, վերլուծության գործընթացից, այսինքն ապահովվի հաստատության աուդիտը, մոնիթորինգը և մենեջմենտը:

Ելնելով կրթության բարեփոխման նպատակներից, որոնք հիմնված են բուհերի որակի ապահովման և ինստիտուցիոնալ բարելավման ներքին մեխանիզմների ստեղծման վրա, փորձեցինք ստեղծել կրթության որակի վերլուծության որոշակի մոդել, որը կհանդիսանար որպես ուղեցույց այդ ուղղությամբ կատարվելիք աշխատանքների համար, ելնելով բուհի առաքելությունից և առանձնահատկություններից: Որակի ապահովման, կառավարման հիմքում ընկած են համապատասխան ISO 9001 չափորոշիչները, TQM, EQSA պահանջները, որոնք ուղեցույց են հանդիսանում կրթության աուդիտի, կառավարման, մշտադիտարկման

իրականացման համար: Այս փաստաթղթերում ներկայացված չափորոշիչները հիմք են ծառայում ներբուհական որակի կառավարման տարբեր մոդելների ստեղծման համար: Նշված քայլերի համակարգումը կնպաստի կրթության որակի ապահովմանը մատչելիության, օբյեկտիվության, թափանցիկության սկզբունքների հիման վրա պարտականությունների, լուծվող խնդիրների վերահսկման ներքին մեխանիզմների մշակման և կիրառման, կրթության նկատմամբ ստեղծագործական մոտեցման ձևավորմանը:

Կրթության որակի կառավարման գործընթացի նպատակն է ձևավորել ուսանողների կրթության որակի գնահատման համակարգ, ստեղծել առավել արդյունավետ ճանապարհներ, մեթոդներ, կիրառել հնարքներ, որոնք կարող են ապահովել կրթության որակի ակտիվ, նպատակաուղղված և արդյունավետ աշխատանքային դաշտ ուսումնական գործընթացի մասնակից բոլոր կողմերի համար: Կրթության որակի կառավարման գիտա-մեթոդական, գիտական խնդիրներից է աջակցել շրջանվարտների մասնագիտական աճին և ապահովել աշխատատեղով, տարածաշրջանի շուկայի ուսումնասիրման հիման վրա: Կրթական գործընթացի որակի գնահատման բովանդակության և մեթոդական կոնցեպտուալ հիմքերը տեսականորեն կարելի է ներկայացնել երեք հիմնական բլոկով՝ ուսումնական արդյունքների գնահատում, պրոեկտում, կառուցողական - մոդելավորման: Վերոնշյալը և նրանց ենթաբաղադրիչները ավելի դժվար է կիրառել, որովհետև դեռ չկան մշակված կարգեր և միջոցներ դրանք իրականացնելու համար: Դրանք են՝ դեկլարության առաջատար դերը, քաղաքականությունը և ռազմավարությունը, անձնակազմի կառավարում, ռեսուրսներ և գործընկերներ, գործընթացների կառավարում, սպառողների բավարարություն, անձնակազմի բավարարություն, բուհի ազդեցությունը հասարակության վրա, բուհի գործունեության արդյունքները: Հանդիսանալով կառուցողական տարր, այսօր Հայաստան որոշ բաղադրիչների իրականացման համար դեռ չունի համապատասխան պայմաններ որակավորման Եվրոպական շրջանակներում իրականացնել բոլոր գործողությունները, սակայն արդեն սկսած գործառույթները հիմք են հանդիսանում Եվրոպական կրթական տարածք լիարժեք իմտեզրման համար:

Ինչպես տեսնում ենք, մենք փորձեցինք համառոտ ներկայացնել մի շարք խնդիրներ, որոնք առաջանում են որակի կառավարման համակարգված

աշխատանքների կազմակերպման ընթացքում: Այս խնդիրների հիմնական մասը կարելի է լուծել պետաքան քաղաքականության իրականացման, համապատասխան իրավաբանական դաշտի ստեղծման պայմաններում:

Գրականություն

Адлер Ю. П. Восемь принципов, которые меняют мир // Стандарты и качество. 2001. N 5-6. С. 49-60.

Конти Т. Самооценка в организациях: пер. с англ. И. Н. Рыбникова при участии Г. И. Герасимовой / Науч. ред. В. А. Лapidус, М. Е. Серов. М.: РИА "Стандарты и качество", 2000. 328 с. ГОСТ Р ИСО 9001-2001.

Системы менеджмента качества. Требования. – М.: Изд-во стандартов, 2001. – 21 с.

Մոզես Բերգ Հայաստանի որակավորման ազգային շրջանակ (www.edu.am)